ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/18.5/30876-2025 « 22 » 09 2025թ.

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԷՎԵԼԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 25/14շ. բն.76)

Հարգելի տիկին Խաչատրյան,

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կարիքների համար վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Գնորդ) և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2024 թվականի նոյեմբերի 27-ին կնքվել է ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1-ի համաձայն՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքները: Մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մեկ ապրանքատեսակի (3-րդ չափաբաժին՝ հանրային հեռախոսներ) գծով 14 .04. 2025թ., իսկ մյուս երկու ապրանքատեսակների (1-ին և 2-րդ չափաբաժինների՝ սեղանի համակարգիչներ) գծով՝ 30.08.2025թ.:

Տեսչական մարմինը 05.09.2025թ. թիվ 01//1711-2025 գրությամբ վարչապետի աշխատակազմին հայտնել է, որ Ընկերությունը մինչ օրս մատակարարումներ չի իրականացրել՝ խախտելով ապրանքների մատակարարման ժամկետներ: Ըստ Տեսչական մարմնի վերոհիշյալ գրության՝ վերջինիս կողմից Վաճառողին առաջարկվել է եռօրյա ժամկետում իրականացնել Պայմանագրով նախատեսված ապրանքները՝ նախազգուշացնելով, որ հակառակ դեպքում Պայմանագրի 2.1.7.1 «բ» պարբերության համաձայն Պայմանագիրը միակողմանի կլուծվի և Ընկերության նկատմամբ կկիրառվեն

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները, սակայն Ընկերության կողմից որևէ գործողություն չի հետևել:

Պայմանագրի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

- Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ